ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հուլիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

98
(2948)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

123 ԷՋԱՆՈՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						Մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	79991110/501	Տեխնիկական բնութագիրը ներկայացվում է հավելված N 1.1-ով	դրամ	1,799,478,000	1	ՀՀ, ք.Երևան	2024 թվականի մայիսի 14-ից 16-ը

2024 թվականի մայիսի 14-16-ը Երեւանում անցկացված «Վերակառուցման եւ զարգացման Եվրոպական բանկ»-ի կառավարիչների խորհրդի՝2024 թվականի տարեկան հանդիպման կազմակերպման համար ՀՀ պետական բյուջեից ծախսվել է 1 միլիարդ 799 միլիոն 478 հազար դրամ: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կնքած պայմանագրից:

1 միլիարդ 799 միլիոն դրամի ծառայությունները մատուցել է «Բեգրաունդ Փրոդաքշընս» ՍՊԸ-ն: 123 էջից բաղկացած պայմանագրից տեղեկանում ենք, որ այս ընկերությանն է վստահվել առաջնության հետ կապված բոլոր ծառայությունների տրամադրումը, որոնք ներառում են գովազդային ծառայություններ, հյուրանոցների ամրագրում, ձայնային, լուսային սարքավորումների ապահովում, հյուրերի ուղեւորափոխադրում, վիդեո եւ ֆոտո նկարահանում, համաժամանակյա թարգմանություն եւ այլն:

«Բեգրաունդ Փրոդաքշընս» ՍՊԸ-ի բաժնետոմսերի 81%-ը ձեռք է բերել Մարինե Ստեփանյանը, 19%-ը՝ Վազգեն Պողոսյանը. նրանք երկուսն էլ հաշվառված են նույն հասցեում:

Վազգեն Պողոսյանը մեկ անձից գնումներ իրականացնող աղմկահարույց՝ «Ֆակտորի Փրոդաքշընս» ՍՊԸ-ի նախկին սեփականատերերից մեկն է, որը, հետագայում, դարձել է արդեն «Բեգրաունդ Փրոդաքշընս» ՍՊԸ-ի տնօրենը:

Նշենք, որ Վազգեն Պողոսյանն Արմեն Սարգսյանի նախագահության տարիներին զբաղեցրել է ՀՀ նախագահի օգնականի պաշտոնը:

Հարկ է նշել, որ «Բեգրաունդ Փրոդաքշընս» ՍՊԸ-ն Երեւանում ծանրամարտի Եվրոպայի առաջնության եւ Ջազի միջազգային օրվա կազմակերպումն է ստանձնել նաեւ:

Տեղեկացնենք նաեւ, որ ընկերությունը հիմնադրվել է 2018 թվականի մայիսի 17-ին՝ հեղափոխությունից մի քանի օր անց, եւ այս տարիների ընթացքում կնքել է 12 պայմանագրեր «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի, Երեւանի քաղաքապետարանի, ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը հուլիսի 12-ին Սյունիքի մարզում այցելել էր ամերիկյան «Քոնթուր Գլոբալ» հիդրոկասկադ, որը, լինելով վերականգնվող էներգիայի առաջատար արտադրող, նպաստում է Հայաստանի էներգետիկ անվտանգության ապահովմանը: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ ԱՄՆ դեսպանին ուղեկցողների շարքում էր նաեւ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի կնոջ՝Գոհար Աբաջյանի քույրը՝Ալվինա Աբաջյանը: «Ժողովուրդ» օրաթերթը Գոհար Աբաջյանից փորձեց տեղեկանալ, թե ինչ կապ ունի իր քույրը դեսպանի այցի կամ դեսպանի հետ, եւ ստացանք հետեւյալ պատասխանը. «Քույրս 2019 թվականից «Քոնթուր գլոբալ»-ի ֆինանսական տնօրենն էր, 2023-ին նշանակվել է գլխավոր տնօրեն»: Թե որքանով է Ալվինա Աբաջյանի աշխատանքի ակտիվությունը կապված քրոջ ամուսնու՝Արարատ Միրզոյանի գործոնի հետ՝ ցանկացանք ճշտել հենց Ալվինա Աբաջյանից, սակայն նրա հետ կապ հաստատել չհաջողվեց:

ՀՀ նոր Սահմանադրության նախագծի շուրջ ակտիվ քննարկումները շարունակվում են: Երեկ Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը հերթական նիստն է արել, որին մասնակցել են արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ղեկավար Դանիել Իոաննիսյանը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի՝ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը եւ խորհրդի այլ անդամներ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում խորհրդի անդամ Դանիել Իոաննիսյանը վստահեցրել է. «Նոր Սահմանադրության նախագծում Անկախության հռչակագրի հղումը հանել-չհանելու հարց մինչեւ օրս չի քննարկվել»: Սահմանադրական բարեփոխումների խորհուրդն առաջարկում է հրաժարվել ընտրություններից հետո խորհրդարանում կայուն մեծամասնություն ձեւավորելու սահմանադրական պահանջից: ՀՀ նոր Սահմանադրության նախագծի հիմնական դրույթներից մեկն էլ հենց «կայուն մեծամասնության» վերաբերյալ հոդվածից հրաժարվելն է: Հայաստանի Սահմանադրության համաձայն՝Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով, եւ ընտրական օրենսգրքով երաշխավորվում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձեւավորումը՝տեղերի 54%-ը: Օրենսդրության համաձայն, եթե ընտրությունների արդյունքում կամ քաղաքական կոալիցիայի ձեւավորման միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձեւավորվում, ապա կարող է ընտրությունների երկրորդ փուլ անցկացվել: Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը մշակել է հայեցակարգ, որով առաջարկվում է պահպանել կառավարման խորհրդարանական մոդելը, բայց հանել կայուն մեծամասնության հոդվածը եւ ներդնել սովորական՝համամասնական ընտրակարգ, որտեղ ընտրությունների երկրորդ փուլ չի նախատեսվում: Ի դեպ, Երեւանում հուլիսի 1-ին՝Ժողովրդավարության հայկական երրորդ համաժողովի ժամանակ, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ ՔՊ-ն եւս կողմ է կայուն մեծամասնություն ձեւավորելու պահանջից հրաժարվելուն: Դանիել Իոաննիսյանը կարծում է, որ նոր Սահմանադրության ընդունումը 2027 թվականից շուտ չի լինելու, քանի որ այս գործընթացը դեռ անցնելու երկար փուլեր ունի. նախ ԱԺ-ում պետք է քննարկվի, այնուհետեւ դրվի հանրաքվեի: Մեկ անգամ եւս արձանագրենք, որ որքան էլ իշխանության ներկայացուցիչները վստահեցնում են, որ ՀՀ Սահմանադրությունը մեր ներքին գործն է եւ որեւէ այլ երկիր չի կարող միջամտել, բայց Նիկոլ Փաշինյանը Հայաստանի մայր օրենքը «սրբագրելու» գործին ձեռնամուխ եղավ հենց Ալիեւի հոխորտանքներից հետո:

Մինչ «ՔՊ-ացած ԲՀԿ-ական» Սերգեյ Բագրատյանը ազնվության եւ օրինականության դասեր է տալիս ԱԺ ամբիոնից, երկրի իրավապահ մարմինները բառացիորեն փորձում են հասկանալ նրա՝գիտությունների դոկտոր կնոջ հանքերի սկիզբը եւ վերջը: Առավել ուսանելի է պատգամավորի կնոջ մասնագիտական աշխատանքի գրաֆիկը. Նաիրա Հակոբյանը 2023 թվականին հանդիսացել է Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի, Ավետիք Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարանի, Երեւանի պետական համալսարանի, Միջազգային գիտակրթական կենտրոնի, Սլավոնական համալսարանի աշխատակից: Հակոբյանը եւս 2 վայրից (տե՛ս ցանկը ArmLur.am կայքում) ստացել է քաղաքացիաիրավական աշխատանքների եկամուտներ: Արդյունքում՝ գիտությունն է տուժում թե հանքարդյունաբերությունը, հավանաբար կգնահատի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ուսումնասիրությունը:

ԶՐՈՒՅՑ

«ՔԱՐՈԶՉԱՄԵՔԵՆԱ Է ԳՈՐԾՈՒՄ». ՈՍԿԱՆՅԱՆ

Երեւանում կայացել է «Սահմանադրության փոփոխության հրամայականը» թեմայով քննարկում, որին հրավիրված են եղել թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր գործիչներ: Իշխանության ներկայացուցիչները քննարկմանը չեն մասնակցել:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քննարկման մասնակիցներից իրանագետ, ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանի հետ:

-Պարոն Ոսկանյան Ձեր գրառումներում անդրադարձել էիք Իրանում Ադրբեջանի դեսպանատան վերաբացմանը: Սա ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ: Արդյո՞ք Իրանը այդպիսով քայլ արեց՝ ցույց տալով, որ Ադրբեջանի հետ փորձում է նոր հարաբերություններ զարգացնել:

-Նման բան չկա: Գիտեք, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում ադրբեջանական դեսպանատունը փակել էր հենց Ադրբեջանի կառավարություն կոչեցյալը՝ 2023 թվականի հունվարից ի վեր, եւ հենց իրենք էլ բացեցին դեսպանատունը: Իրանը որեւէ դեսպանատուն չէր փակել, որպեսզի բացեր. հետեւաբար, այս իմաստով սա ոչինչ չի նշանակում: Պարզապես ադրբեջանական կողմը եւ հենց բռնապետի քարոզչամեքենան այս փաստը փորձում է հենց մեր դեմ օգտագործել՝ փորձելով ցույց տալ, որ Իրանում նոր նախագահ գա, որին իրենք չակերտավոր կոչում են «ադրբեջանցի», ինչի արդյունքում Իրանի-Ադրբեջան հարաբերությունները մտել են զարգացման բոլորովին նոր փուլ: Սակայն իրականում նման որեւէ բան դեռեւս չկա: Բացի դրանից՝ այսպիսով Ադրբեջանի իշխանությունը փորձում է սեփական հասարակությանը համոզել, քանի որ այդ նույն քարոզչամեքենան ուռճացրել էր Իրանի նորընտիր նախագահի ծագման հարցը՝ նրան կոչում էին «ադրբեջանցի»:

-Ի՞նչ հիմքով, պարոն Ոսկանյան:

-Որեւէ հիմք չկա: Դա նույնն է, եթե մենք փորձենք ամերիկացիներին կոչել անգլիացի, կամ անգլիացիներին կոչել ամերիկացի՝ միայն այն հիմքով, որ երկու էթնիկական խմբերն էլ խոսում են անգլերենով: Կամ, օրինակ, գերմանացիներին կոչենք ավստրիացի, կամ ավստրիացիներին՝ գերմանացի: Դա պարզապես նույն լեզվով խոսելու հանգամանքով է պայմանավորված՝ չխոսելով նրա մասին, թե լեզվաբանական որքան տարբերություններ ունենք, գրական մեծ տարբերություններ՝ ատրպատականում խոսվող թյուրքերենի եւ Ադրբեջանում խոսվող ադրբեջաներենի միջեւ:

Իրանի նորընտիր նախագահը՝ Մասուդ Փեզեշքիանը իրանցի է, հակառակ դեպքում չէր կարող մասնակցել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահական ընտրություններին եւ դառնալ նախագահ:

Պետք է նշել, որ այս առումով որեւէ նոր հարաբերություն երկու պետությունների միջեւ չկա: Ավելին՝ դրական ազդակներ եղան հենց Փեզեշքիանի կողմից, ով Հայաստանի եւ Իրանի միջեւ անցնող սահմանը կոչեց «Հույսի սահման», որը տեղավորվում է Իրանի հոգեւոր առաջնորդի նախանշած շրջանակի մեջ: Ըստ Իրանի հոգեւոր առաջնորդի՝ ՀՀ-Իրան սահմանը հազարամյակների սահման է, որը չի կարող խախտվել, փակվել կամ չգործել. դա Իրանի համար կարմիր գիծ է: Այս համատեքստում նորընտիր նախագահի դիրքորոշումները համապատասխանում են Իրանի հոգեւոր առաջնորդի նախագծած շրջանակին:

Մի շատ կարեւոր հանգամանք էլ կա. այս ուռճացված առասպելը առ այն, որ Փեզեշքիանը ադրբեջանցի է, կարող է հենց Բաքվի բռնապետի դեմ աշխատել, քանի որ այս դեպքում միջին վիճակագրական ադրբեջանցին սկսում է Իրանի նախագահ ընդունել՝ որպես իր նախագահ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանի գործով դատարանը գնացել է որոշում կայացնելու: Սեպտեմբերի 13-ին Ազգային ժողովի Պետահրավական հարցերով մշտական հանձնաժողովի միջադեպով վճիռ կհրապարակվի: Ինչ է սպասվում Հայաստան խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանին:

2023 թվականի մարտի 31-ին «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանը Պետահրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստում պատասխանել էր ամբարտավան պահվածք դրսեւորած հանձնաժողովի նախագահին, որը պարծեցել էր, թե՝ ոնց ուզեմ՝ կխոսեմ, ապա բռունցքով հարվածել էր ՔՊ պատգամավորի ձախ հոնքին:

Քրեական գործը 2023 թվականի ապրիլի 25-ին մտել է դատարան, եւ Միեր Սամվելի Սահակյանին մեղադրանք է առաջադրվել:

Այս գործով դատարան էին հրավիրվել ՀՀ ԱԺ ՔՊ պատգամավորներ Արփի Դավոյանը եւ Ալիսա Ղազարյանը ու հարցաքննվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄԸ 2027 Թ.-ԻՑ ՇՈՒՏ ՉԻ ԼԻՆԻ

Հայաստանում առաջարկվում է հրաժարվել ընտրություններից հետո խորհրդարանում կայուն մեծամասնություն ձեւավորելու սահմանադրական պահանջից: Հայաստանի Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով, եւ ընտրական օրենսգրքով երաշխավորվում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձեւավորումը՝ տեղերի 54%-ը: Օրենսդրության համաձայն, եթե ընտրությունների արդյունքում կամ քաղաքական կոալիցիայի ձեւավորման միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձեւավորվում, ապա կարող է ընտրությունների երկրորդ փուլ անցկացվել:

Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովը մշակել է հայեցակարգ, որով առաջարկվում է պահպանել կառավարման խորհրդարանական մոդելը, բայց հանել կայուն մեծամասնության հոդվածը եւ ներդնել սովորական համամասնական ընտրակարգ, որտեղ ընտրությունների երկրորդ փուլ չի նախատեսվում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամ Դանիել Իոանիսյանը հայտնեց, որ հանձնաժողովն այսօր եւս նիստ է արել: Նրա խոսքով՝ նոր Սահմանադրության ընդունումը 2027 թվականից շուտ չի լինելու, իսկ քննարկումների ընթացքում մինչ օրս Սահմանադրության նախաբանին կամ անկախության հռչակագրին հղում չի արվել:

Դանիել Իոանիսյանը նաեւ նշեց, որ այս գործընթացը դեռ երկար փուլեր ունի անցնելու. նախ ԱԺ-ում պետք է քննարկվի, այնուհետեւ դրվի հանրաքվեի:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԲԱՆՏՈՒՄ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է Ա. ԱՇՈՏՅԱՆԸ

«Հայրենիք» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Խաչիկ Գալստյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հայկական PR մրցանակաբաշխություն 2024: Տարվա քաղաքական գործիչ նոմինացիան հանձնելիս: Ցավոք նոմինանտն անազատության մեջ է:

Մրցանակը ստանում է նրա կինը:

Հայաստանում կան «խղճի բանտարկյալներ»:

✔ Քաղաքական ներկապնակի մի գույն այս պահին պակաս է ամենօրյա թատերաբեմում:

✔ Սակայն, այ քաղաքագիտական երկնակամարում մի նոր աստղ է փայլում:

✔ Բանտից հրապարակված էսսեները քաղաքական հրապարակախոսության դասական գոհարներ են», - նշել է նա:

ՀԱՅՏՆԻ Է՝ ՈՎ ԿՓՈԽԱՐԻՆԻ ՏՈՅՎՈ ԿԼԱԱՐԻՆ

Հարավային Կովկասի եւ Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարին կփոխարինի Չեխայից Մագդալենա Գրոնոն, X-ում հայտնել է ԵՄ-ում Չեխիայի մշտական ներկայացուցչությունը:

«Քաղաքական եւ անվտանգության հարցերի հանձնաժողովը հենց նոր հաստատել է Չեխիայից Մագդալենա Գրոնոյին Հարավային Կովկասում եւ Վրաստանում ԵՄ հատուկ ներկայացուցիչ: Թեկնածությունը պաշտոնապես կհաստատի ԵՄ խորհուրդը»,- ասվում է գրառման մեջ:

Տոյվո Կլաարը Հարավային Կովկասի եւ Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ է նշանակվել 2017 թվականին: Նա բազմիցս այցեր է կատարել տարածաշրջան, այդ թվում՝ հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացի շրջանակում:

ԹՐԱՄՓԸ՝ ՊՈՒՏԻՆԻ ՄԱՍԻՆ

ԱՄՆ նախագահի թեկնածու Դոնալդ Թրամփը հայտնել է, որ իր նախագահության օրոք «մեզ երբեք պատերազմ չէր սպառնա», եւ նա թույլ չէր տա, որ Կրեմլի ղեկավար Վլադիմիր Պուտինը պատերազմ սկսեր Ուկրաինայի դեմ: Այս մասին քաղաքական գործիչն ասել է Bloomberg-ի հետ հարցազրույցում:

«Մենք Պուտինի հետ լավ էինք գլուխ հանում, մենք լավ հարաբերություններ ունեինք... Նա երբեք չէր խցկվի Ուկրաինա: Ես կասեի՝ «Երբեք, երբեք չխցկվես Ուկրաինա»,- հայտնել է ԱՄՆ նախկին նախագահը:

Թրամփի կարծիքով՝ աշխարհի ներկա իրավիճակը «կարող է ավարտվել Երրորդ համաշխարհային պատերազմով»: Քաղաքական գործիչն ամեն բանում մեղադրում է ընտրություններում իր մրցակցին՝ ԱՄՆ գործող նախագահ Ջո Բայդենին:

«Իմ օրոք պատերազմ չի եղել... Ոչ մի պատերազմ՝ ԻՊ-ից բացի: Ես նրանց վերջը տվեցի շատ կարճ ժամանակում: Ինձ ասում էին, որ դրա համար հինգ տարի է պետք, իսկ ինձ քիչ ժամանակ պետք եղավ, մենք նրանց հաղթեցինք... Եվ Ռուսաստանը ոչ մի տարածք չէր զավթում»,- ավելացրել է Թրամփը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿՄԱՍՆԱԿՑԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Մեծ Բրիտանիայում կմասնակցի Եվրոպական քաղաքական համայնքի 4-րդ գագաթնաժողովին, ինչպես հայտնում են ադրբեջանական ԶԼՄ-ները:

Հիշեցնենք, որ երեկ ՀՀ կառավարությունից հայտնել են, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ հուլիսի 17-20-ն աշխատանքային այցով գտնվելու է Լոնդոնում, որտեղ կմասնակցի Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին:

ԼԱՎՐՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄՆ-ը կոչ է անում իր դաշնակիցներին նախապատրաստվել տեւական պատերազմների:

Այս մասին հայտարարել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը:

«Վաշինգտոնը կոչ է անում իր դաշնակիցներին պատրաստվել երկարատեւ պատերազմների, եւ ոչ միայն Եվրոպայում:

ՆԱՏՕ-ն գոհ չէ Կիեւում իր սանձազերծած պատերազմից. Միացյալ Նահանգները շարունակում է սրել իրավիճակը»,- հայտարարել է Լավրովը:

«Ռուսաստանը պատրաստ է շահերի հավասարակշռություն գտնել ուկրաինական ներկայիս ճգնաժամի կարգավորման հարցում:

Մոսկվան կոչ է անում բոլորին, ովքեր հետաքրքրված են ուկրաինական ճգնաժամի հաղթահարմամբ՝ հաշվի առնել ազգային փոքրամասնությունների իրավունքների խնդիրը»,- ասել է Լավրովը:

«ԵՍ ԸՆԴԱՄԵՆԸ ԴՈՒՌ ԵՄ ԲԱՑԵԼ». ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆ

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հարցազրույց է տվել ամերիկյան Al-Monitor լրատվականին, որի ընթացքում անդրադարձել է քաղաքական ուժերի ներգրավվածությանը:

««Դաշնակցությունը», «Հանրապետական կուսակցությունը» կան բազմաթիվ այլ կուսակցություններ: Բոլորը ներգրավված են: Ինչպես արդեն ասել եմ, երբ մենք սկսեցինք այս շարժումը, հիմքում դրվեցին ճշմարտությունը, հաշտությունն ու արդարությունը: Դա բացարձակապես բացակայում է մեր հասարակության մեջ: Այս ամբողջ ընթացքում եղել են բազմաթիվ մարդիկ, կազմակերպություններ, կուսակցություններ, ովքեր ներգրավվել են մեր շարժմանը: Այն, ինչ ես փորձել եմ անել, դռները բացելն է բոլորի համար: Մեր կողմից ձեւավորվելիք հաշտեցման կառավարության անցումային շրջանի ընթացքում մենք քաղաքական գնահատական ենք տալու վերջին 30 տարիների դեպքերին, ինչպես դա արվեց Հարավաֆրիկյան Հանրապետությունում»:

ԻՆՉՊԵՍ ՇՏԿԵԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՀՍՏԱԿ ՏԵՍԼԱԿԱՆ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԻ

«Քաղաքի մի մասը լույս չունի, մյուս մասը՝ ջուր, փողոցները՝ քարուքանդ, ամենաբանուկ խաչմերուկներում՝ ժամերով առանց որեւէ կարգավորման իրավիճակ է: Երկիրը, մեծ հաշվով, չի կառավարվում»: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ, քաղաքական վերլուծաբան Վահե Հովհաննիսյանը:

«Ադրբեջանը կոշտ պահանջներ է դնում, ԱՄՆ-ն ասում է պետք է ծանր փոխզիջումներ լինեն (պարզ է, թե ով պիտի զիջի): Այս պայմաններում իշխանությունը գնում է անհոգ արձակուրդի՝ մի ամսով, մի քանի շաբաթով: Միակ աշխատանքային գործունեությունը հեծանիվն է:

Իրավիճակը ամբողջականանում է ամեն ինչին հարմարվող անմռունչ հասարակության գործոնով: Ի դեպ, 2020-ին նույն պատկերն էր, երբ օդում կար պատերազմի հոտը, ու մտածելու ունակ մարդիկ հասկանում էին, որ պատերազմն արդեն դռան հետեւում է, երկրի նախագահ, վարչապետ, ԱԺ նախագահ եւ մնացյալ պաշտոնյաներն արձակուրդների էին գնում: Հասարակությունը՝ նույնպես: Հիշենք նաեւ, որ երկիրը նախագահ էլ ունի: Հիշենք նաեւ, որ բազմաթիվ ընդդիմադիր լիդերներ էլ ունի, որոնց «արձակուրդաունակությունը» պակաս չէ, եւ ովքեր ակտիվանում են միայն ուրիշների պրոցեսների ժամանակ՝ քվոտա կամ մասնաբաժին ստանալու համար:

Մյուս կողմից ակնհայտ է, որ ձեւավորվել եւ ձեւավորվում է հանրային գործիչների ու հանրային ակտիվի մի համայնք (բավականին պատկառելի), որը գնալու է ինքնակազմակերպման ճանապարհով, եւ որը պետք է կազմակերպի պետության կազմաքանդման դիմադրությունն ու պատմության գիրկն ուղարկի այս վիճակին հասցրած իշխանությանը (եւ ընդհանրապես բոլոր նրանց, ովքեր խանգարում են երկրի առողջացմանը):

Այսօր հրապարակում Բագրատ Սրբազանն է, որի գործոնն ունի միաժամանակ կոնսոլիդացման եւ դաշտի մաքրման մեծ պոտենցիալ: Մարդը, որը չունի նյութական ակնկալիքներ եւ շարժմանը միացողներից պահանջում է անել նույնը, կարող է հասնել դաշտի առողջացմանը՝ համախմբելով գաղափարական տարբեր դաշտերում գործող, բայց երկրի հանդեպ սեփական պատասխանատվությունը գիտակցող լայն շրջանակների: Նոր հանրային դաշտն իրական այլընտրանք պիտի դառնա գործող իշխանությունների, որոնց ապաշնորհության (կամ՝ պայմանավորվածությունների) հետեւանքով պետությունը ներսից ու դրսից անկառավարելի է դարձել:

Հանրությանը պիտի ներկայացվի իրավիճակը շտկելու եւ երկրի կառավարելիությունը վերադարձնելու հստակ, հասկանալի տեսլական: Հակառակ դեպքում ստացվում է, որ մեր երկրին համ դրսից են հոշոտում, համ մենք մեր վարքագծով՝ ներսից», - գրել է նա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տարիներ տեւած բանակցություններից հետո՝ այսօր, Բրյուսելում Եվրոպական խորհուրդն ի վերջո հաստատեց Հայաստանի հետ վիզաների ազատականացման շուրջ բանակցություններ սկսելու Եվրահանձնաժողովի առաջարկը:

«Անդամ 27 երկրների հավանությունից հետո հարցը կփոխանցվի Եվրահանձնաժողովին, որն էլ կհայտարարի՝ կոնկրետ երբ են սկսում բանակցությունները եւ գործողությունների ինչ ծրագիր է դնում Երեւանի առջեւ»,- նշել է Եվրոպայի հարցերով խմբագիր Ռիկարդ Յոզվյակը:

Դա նշանակում է, որ կներկայացվեն կատարված քայլերի մասին ամենամյա զեկույցներ, որոնք կշարունակվեն մի քանի տարի: Որոշ երկրների, օրինակ, Մոլդովայի դեպքում, պահանջվեց 3-ից 4 տարի, Վրաստանից՝5, Ուկրաինայից՝9: Թուրքիայի հետ բանակցությունները 10 տարուց ավելի է դեռ շարունակվում են, այնպես որ ամեն մի երկիր տարբեր կերպ է անցնում այդ ճանապարհը: Սա գործընթացի սկիզբն է, որն ավարտին հասցնելու համար ժամանակ կպահանջվի:

Հայաստանի հարցով այսօր ընդունվելիք որոշման մեջ նշվում է՝ վիզաների պահանջը կհանվի անհրաժեշտ բոլոր չափանիշների լիարժեք բավարարման դեպքում միայն:

Ըստ Յոզվյակի՝ որպես կանոն, Բրյուսելն առաջադրում է չորս հիմնական պահանջ՝ սահմանների կառավարումից մինչեւ կազմակերպված հանցավորության ու կոռուպցիայի դեմ պայքար. հիմնականում խոսքը ներքին խնդիրների մասին է՝ փաստաթղթերի անվտանգության, սահմանների, ապօրինի ներգաղթյալներին հետ ընդունելու, բայց նաեւ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության:

Սա հարյուրավոր էջերից բաղկացած ծավալուն պահանջների մի ցանկ է, որը Հայաստանը պետք է իրագործի, եւ դրա համար տարիներ կպահանջվեն:

Որպես կանոն, անհրաժեշտ գործողությունների այդ ծրագիրը կազմելու եւ ներկայացնելու համար, Յոզվյակի խոսքով, Բրյուսելից մոտ կես տարի է պահանջվում, բայց քանի որ հունիսին տեղի ունեցած Եվրախորհրդարանի ընտրություններից հետո նոր Եվրահանձնաժողով դեռ չի ձեւավորվել, ակնկալվում է, որ Հայաստանի դեպքում պահանջների այդ ցանկը կներկայացվի կամ այս տարեվերջին, կամ մյուս տարվա սկզբին: Դրանք լիարժեք իրագործելուց հետո՝ Հայաստանը եւս մեկ կարեւոր խոչընդոտ պետք է հաղթահարի:

«Այս հարցում վերջնական որոշում կայացնելու իրավունք ունի երկու կառույց. մեկը Եվրախորհրդարանն է, որտեղ Հայաստանն անհրաժեշտ աջակցություն ունի, երկրորդը՝ անդամ երկրները: Բոլոր 27-ը պետք է միասին իրենց համաձայնությունը տան, ինչը միշտ չէ, որ հեշտ է, քանի որ հիմա Եվրոպայում շարժում է սկսվել ապօրինի ներգաղթի դեմ»,- պարզաբանել է լրատվամիջոցի զրուցակիցը:

ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ

Մի ժամանակ նախարարություններում հաստիքացուցակ էր, այժմ՝ թիմ:

Ակամա շատ ճիշտ է բնորոշված շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքը, այսօրվա կառավարման համակարգի բարքերը՝ ՔՊ-ական լինի՝ միայն թե հեծանիվ քշել իմանա: Մենք փորձեցինք պարզել շրջակա միջավայրի նախարարության հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու, փոխնախարար Մեյմարյանի կենսագրությունը. այն բացակայում էր կայքում: Փոխարենը Արամ Մեյմարյանի հայտարարագրից հասկացանք, որ, հավանաբար, «ղազախական բում»-ի ժամանակ ավտոյի «գործ է արել»՝ միաժամանակ խեղաթյուրելով վաճառած 2 մեքենաների ձեռքբերման ամսաթվերը:

Երբ 1998 թվականին Կարեն Դեմիրճյանին հարցրեցին իր թիմի մասին, նա պատասխանեց, որ չի պատրաստվում ֆուտբոլ խաղալ, հետեւաբար, չկա թիմ: Այսօր կառավարությունում թիմը արդեն պաշտոնական իրողություն է:

ԿՐԱԿՈՑՆԵՐ

25-ԱՄՅԱ ԲՆԱԿԻՉԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

2024թ. հուլիսի 9-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության ԵՔՎ ՔՀ բաժնում օպերատիվ տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Էրեբունի փողոցի շենքերից մեկի մոտ կրակոցներ են արձակում եւ վիրավոր քաղաքացի կա:

Նույն օրը՝ ժամը 19:05-ին, հաղորդում է ստացվել այն մասին, որ «ձախ սրունքի հրազենային վիրավորում» ախտորոշմամբ «Էրեբունի» բժշկական կենտրոն բուժօգնության է տեղափոխվել Երեւան քաղաքի 27-ամյա բնակիչը, ում առողջական վիճակը գնահատվում է բավարար:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է առերեւույթ կրակոցներ արձակած անձի ինքնությունը, ով Երեւան քաղաքի բնակիչ է՝ ծնված 1998թ.: Վերջինս նույն օրը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Էրեբունու բաժին, որտեղ նրա գոտկատեղից ընկել է «SPORTSMAN CAL .25» գրառմամբ ատրճանակ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Իրականացված քննչական գործողությունների արդյունքում պարզվել է, որ 2024թ. հուլիսի 9-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, 25-ամյա երիտասարդը վիճաբանել է 27-ամյա համաքաղաքացու հետ, որի ընթացքում իր մոտ եղած ատրճանակով կրակոցներ է արձակել վերջինիս ուղղությամբ՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ վերոնշյալ շենքի հարեւանությամբ գտնվող մայթեզրին հայտնաբերվել եւ վերցվել է 2 կրակված պարկուճ: Հարցաքննվել են վկաներ, նշանակվել են դատաբժշկական, դատաձգաբանական, դատաքիմիական փորձաքննություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա միջնորդություն է հարուցվել հսկող դատախազին՝ քսանհինգամյա երիտասարդի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով:

Երիտասարդի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՏԱՎՈՒՇԸ ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐ ՈՒՆԻ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով, Վարդուհի Պապիկյանը նշանակվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

«Հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին եւ 166-րդ հոդվածի 6-րդ մասերը, ինչպես նաեւ Բարձրագույն դատական խորհրդի 2024 թվականի հուլիսի 15-ի ԲԴԽ-72-Ո-137 որոշմամբ ներկայացված առաջարկությունը. Վարդուհի Պապիկյանին նշանակել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր»,- ասված է հրամանագրում:

Դ. ՍԱՐԳՍՅԱՆՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Դավիթ Սարգսյանն այժմ ազատության մեջ է: Այս մասին հայտնել է փաստաբան Ռոման Երիցյանը:

«ՀՀ վերաքննիչ դատարանը բավարարեց Ստեփանակերտի քաղաքապետին տնային կալանքի տակ պահելու որոշման դեմ մեր ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ բեկանելով Մասիս Մելքոնյանի կայացրած ապօրինի դատական ակտը եւ մերժելով քննիչի ներկայացրած միջնորդությունը»:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՆԵՐՔԻՆ ՀՐԱՀԱՆԳ Է ՏՎԵԼ

Երեկ իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանը պաշտոնապես հայտնեց, որ հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում նռնակի պայթյունի ու ոստիկանների ու քաղաքացիների բախման քրեական վարույթով նախաքննության ավարտ է հայտարարվել: 14 մեղադրյալների մասով գործն ուղարկվում է դատարան:

Մեղադրյալներից 4-ը բանտային կալանքի տակ են (Կարմեն Մնացականյան, Ավետիք Ջիլավյան, Արմենակ Խաչատրյան, Լեւոն Սաֆարյան), մյուսները՝ տնային կալանքի:

Իրավիճակին արձագանքելով՝ փաստաբան Ռուբեն Մելիքյանը հայտնեց նաեւ, որ քաղաքացիների նկատմամբ բռնություն կիրառած ոչ մի ոստիկանի անգամ մեղադրանք չի առաջադրվել:

Փաստացի 1 ամիս է ինչ քննություն է իրականացվում հունիսի 12-ի դեպքերով, եւ որեւէ ոստիկան չի կանգնել պատասխանատվության առաջ:

Ու դատելով իրավիճակից՝ չի էլ կանգնի դատարանի առաջ: ««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն օրեր առաջ հանդիպում է ունեցել ոստիկանական համակարգի ներկայացուցիչների հետ ու հայտնել, որ իրենց կողքին է: Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վարչապետը այդ հանդիպման ժամանակ նաեւ անձամբ բանավոր հրահանգ է տվել ուժային կառույցների ղեկավարներին, որ որեւէ ոստիկանի որեւէ գործով չկալանավորեն:

Նա բացատրել է, որ եթե կալանավորման գնան, ապա ոստիկանների ոգին կկոտրեն, սակայն պետք չէ ոստիկաններին թեւաթափ անել: Ահա, հենց այս հրահանգի հետեւանքով՝ մինչեւ օրս ապրիլից մեկնարկած շարժման անդամների նկատմամբ բռնության դեպքով որեւէ ոստիկանի պատասխանատվության չեն կանչել:

Հիշեցնենք, որ հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում ցուցարարների նկատմամբ կիրառվել էր անհամաչափ ուժ՝ օգտագործվել էր «Զարյա 3» տեսակի նռնակ, որի հետեւանքով բազմաթիվ քաղաքացիներ տարբեր աստիճանի վնասվածքներ եւ վիրավորումներ էին ստացել:

Միջադեպից հետո մեղադրանք է առաջադրվել 14 քաղաքացու, սակայն ոչ մի ոստիկանի:

Ք. Մ.

ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

«ՏԱՐՎԱ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ»

ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարմյանի մամուլի քարտուղար Գոռ Աբրահամյանը ճանաչվել է «Տարվա մամուլի քարտուղար»:

Նա այդ անվանակարգում հաղթող է ճանաչվել Հայկական PR ասոցիացիայի կողմից կազմակերպված 2024թ. «Հայկական PR մրցանակաբաշխության» շրջանակներում՝ մասնագիտական հանձնաժողովի կողմից:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ՝ ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Արդարադատության առաջին դասի խորհրդական Հրաչ Դավթյանը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի հրամանով նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության Ապարանի քննչական բաժնի պետ:

Հրաչ Դավիթի Դավթյանի կենսագրություն

Ծնվել է 1983թ. փետրվարի 26-ին, Արարատի մարզի Ներքին Դվին գյուղում:

2005թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

2004-2006թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Աշխատանքային գործունեություն

2007-2008թթ.՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի մարզի քննչական բաժնի քննիչ /ի հաշիվ ՀԿԳ ավագ քննիչի/,

2008-2012թթ.՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի մարզի քննչական բաժնի քննիչ,

2012-2014թթ.՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ,

2014թ.՝ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Արարատի մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ,

2014-2016թթ.՝ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ,

2016-2018թթ.՝ Արարատի մարզի դատախազության դատախազ,

2018-2020թթ.՝ Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ,

2020-2021թթ.՝ Երեւան քաղաքի դատախազության դատախազ,

2021-2023թթ.՝ Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազի տեղակալ,

2023թ.՝ Արարատի մարզի դատախազի տեղակալ,

2023թ.՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի անվտանգության ապահովման բաժնի պետ, ապա ներքին անվտանգության բաժնի պետ:

Պարգեւներ

Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար խրախուսվել է գերատեսչական տարբեր պարգեւներով:

Այլ տվյալներ

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 16-ից հուլիսի 17ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 105 դեպք որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓՈՐՁՈՒՄ Է ՔՐԻՑ ՄԱՔՈՒՐ ԴՈՒՐՍ ԳԱԼ

Կիրանց գյուղի բնակիչները հայտնեցին, որ Տավուշի մարզպետարանը գյուղի բնակիչներին դրամական փոխհատուցում տալու մասին փաստաթղթեր է ստորագրել տալիս: Այդ թղթերը լրիվ դատարկ չեն, ինչպես գրում են որոշ լրատվամիջոցներ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝Ադրբեջանին հանձնված տարածքների դիմաց Կիրանց գյուղի բնակիչներին պետության կողմից որքան գումար է մինչեւ այժմ տրվել, ընդհանուր որքան գումար է նախատեսված այդ նպատակով, ինչ սկզբունքով են որոշվում Կիրանցի բնակիչներին փոխհատուցվող գումարների չափերը: Մարզպետը պատասխանել է՝ այդ հարցով առաջարկում ենք դիմել համապատասխան պետական լիազոր մարմին: Մարզպետը չի նշել, թե որն է համապատասխան պետական լիազոր մարմինը: Մարզպետարանը զբաղվում է հանձնված հողերի դիմաց պետական բյուջեից փոխհատուցման հարցով, սակայն մարզպետը հրաժարվել է այդ մասին հարցին պատասխանելուց, նա փորձում է կեղտոտ ջրից մաքուր դուրս գալ:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ

Կիրանցի հիմնական դպրոցի տնօրեն Վոլոդյա Բաբինյանը հայտնեց, որ տարեվերջյան ժողովին, որտեղ քննարկվել են անցած ուսումնական տարվա արդյունքները, Կիրանց գյուղի մի քանի ծնողներ բարձրացրել են նոր ուսումնական տարում նորակառույց դպրոցի շենք աշակերտների հաճախել-չհաճախելու հարցը: Սահմանազատման անվան տակ Ադրբեջանին Կիրանցից տարածքներ հանձնելուց հետո՝դպրոցի նորակառույց շենքը հայտնվել է սահմանից մոտ 50 մետր հեռավորության վրա: Պետական բյուջեից Կիրանցի դպրոցի շենքի շինարարության համար հատկացվել է 615 միլիոն դրամ. շինարարությունը սկսվել է 2022 թվականին, դպրոցի շենքը պետք է շահագործման հանձնվի այս տարվա սեպտեմբերի սկզբին: Կիրանցի դպրոցի տնօրենն ասաց, որ նորակառույց դպրոց աշակերտների հաճախել-չհաճախելու վերաբերյալ ոչինչ չի որոշվել, անորոշ վիճակ է, մինչեւ նոր ուսումնական տարվա սկզբին այդ խնդիրը Կիրանցի աշակերտների ծնողների հետ եւս մի անգամ քննարկվի: Նախկինում Կիրանցի, համայնքների խոշորացումից հետո Իջեւանի համայնքապետարանին պատկանող, ներկայում որպես Կիրանցի հիմնական դպրոց ծառայող շենքը վթարային է, դրա հիմնական պատը խարխլված է:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶՈՒՄ Է

Տավուշի մարզպետարանից տեղեկացանք, որ 2023-24 ուսումնական տարում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թիվը 984 է, անցած՝ 2022-2023 ուստարում եղել է 1040, իսկ 2021-2022 ուստարում՝ 1124: Տավուշի հանրակրթական դպրոցների շրջանավարտների թիվը տարեցտարի նվազում է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳԱԱ. ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 15-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ քննարկում՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում եւ Սփյուռքում առկա գիտական ներուժի միջեւ համագործակցության խորացմանը: Քննարկմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահության, ԳԱԱ ինստիտուտների, ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի, ՀՀ Անվտանգության խորհրդի, ԲՈՒՀ-երի, Մոսկվայի «Դիալոգ» կազմակերպությունից ներկայացուցիչներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ Սփյուռքի հարցերով պատասխանատու, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Իսկանդարյանը: Նա թվեց այն հաստատությունները, որոնք զբաղվում են Սփյուռքի հարցերով՝ ՀՀ ԳԱԱ ինստիտուտներ, Երեւանի պետական համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարան, Սփյուռքի հարցերով հանձնակատարի գրասենյակ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն, Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե, Անվտանգության խորհուրդ եւ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ:

«Սակայն, ըստ էության, մեր՝ բոլորիս գործողությունները միասնական եւ համակարգված չեն: Եթե մեր նպատակն է ամրապնդել կապը Սփյուռքի հետ, ապա մենք պետք է կարողանանք միավորել մեր ջանքները: Այս նպատակով որոշում կայացվեց փորձել համատեղել Սփյուռքով զբաղվող մասնագետներին եւ հնարավորության դեպքում մշակել մեխանիզմներ գիտական Սփյուռքի հետ լավագույնս համագործակցելու համար»,- իր ելույթում ասաց Գոհար Իսկանդարյանը:

ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հայրենադարձության հարցերով պատասխանատու Հովհաննես Ալեքսանյանը նշեց, որ վերջին տարիներին իրականացնում են Սփյուռքի ներուժի հաշվառման ծրագիրը: «Ծրագրի շրջանակներում ստեղծված տեղեկատվական բազայի մեջ կան, անշուշտ, մեր գիտնականների տվյալները: Ակադեմիային, ինստիտուտներին, համալսարաններին եթե պետք են գիտնականներ, որոնց վերաբերյալ տվյալներ կան, անհրաժեշտ ընթացակարգն անցնելուց հետո՝ դրանք հնարավոր է ձեռք բերել»,- ասաց նա:

Ելույթներում նշվեց Սփյուռքի ներուժի գնահատման, համագործակցության համար հստակ գաղափարախոսություն ունենալու, Սփյուռքի ռազմավարության, սերնդափոխության, դրանով պայմանավորված կապերի ուժեղացման անհրաժեշտության մասին: Հովհաննես Ալեքսանյանը նշեց, որ ներկայում իրականացվում են մի շարք ծրագրեր Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման համար, որոնցից են «Քայլ դեպի տուն»-ը, «Ի գործ»-ը, «Սփյուռքի երիտասարդ դեսպան»-ը: Սակայն անելիքներ շատ կան: «Սփյուռքը հիմա տրանսֆորմացիայի փուլում է, բայց դա միայն մեր Սփյուռքին չէ հատուկ: Իհարկե, սերունդները փոխվել են, այլ մտածողություն կա, հիմա ավելի ինտեգրված են, եւ շահագրգռություններ են պետք»,- ասաց նա:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի վարիչ Ռուբեն Կարապետյանը եւ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանն առաջարկեցին ստեղծել Սփյուռքի հարցերով մասնագիտական խումբ, որը կգործի ՀՀ ԳԱԱ նախագահության ենթակայության տակ, ինչը կնպաստի գիտական Սփյուռքի եւ Հայաստանի հետ կապերի մեխանիզմների ստեղծմանը, հարաբերությունների ակտիվացմանը:

Քննարկումը կազմակերպվել էր սույն թվականի հունիսի 28-ին ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանի եւ ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Ջարեհ Սինանյանի հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա՝ խորացնել համագործակցությունը՝ակտիվացնելով գիտական Սփյուռքի հետ փոխգործակցությունը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ԱՄԵՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՄՆԴԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը սոցցանցի փակ խմբերից մեկում նկատել է, որ քաղաքացիներից մեկը տեղադրել է պաղպաղակի լուսանկար եւ կից գրել՝ «Yerevan kat սա ի՞նչ է, դուք լրիվ ձեզ կորցրել եք: Ճիճուն ինչ գործ ունի պաղպաղակի մեջ: ԴՈՒՔ ՓՆԹԻ ԵՔ»:

Խմբում խնդիրը բարձրաձայնող Լիանան ArmLur.am-ի հետ զրույցում պատմեց, որ իրենք Գյումրիից են, եւ պաղպաղակը գնվել է հենց այնտեղի խանութից:

«Պաղպաղակը երեկ գնել են երեխաներս, Գյումրի քաղաքից, ես պաղպաղակը հետ տարա խանութ, վաճառողը տեսավ, չորացրած որդ էր մեջը: Աղջիկներս՝ երկուսն էլ, եւ շատ վախկոտ են, եւ զզվող:

Սննդի տեսչության ոլորտում բարձիթողի վիճակ է, ոչ մի բանին չեն հետեւում: Եղել է, որ կաթնամթերք ենք գնել, բորբոսնած է եղել»: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՍԱՏՄ իրազեկման բաժնի պետ Անուշ Հարությունյանը, անդրադառնալով թեմային, ասաց, որ իրենք չեն կարող գործին ընթացք տալ, քանի դեռ քաղաքացին չի ասում՝ որտեղից են դա գնել:

«Ժողովուրդ» օրաթերթը նաեւ փորձեց կապ հաստատել «Երեւան կաթ» ընկերության աշխատակիցների հետ, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ

Հայաստանի բնակչության մեծամասնությունը նախընտրում է իրենց միջոցառումները կազմակերպել ամառային այս օրերին: Շատերը իրենց տոնական միջոցառումները իրականացնելու համար նախապես են ամրագրում ռեստորանները:

Ենթադրելի է, որ խրախճանքներն անպակաս են հասարակության կյանքում՝ կնունքներ, հարսանիքներ, ծնունդներ, գործնական հավաքույթներ, տարբեր մրցանակաբաշխություններ եւ ավարտական երեկոներ:

Ինչ արժեքների միջեւ տատանվում ռեստորանների գները՝ մեկ անձի համար, Աշտարակի շրջանում:

Աշտարակ. «Վանա Լիճ» ռեզորթ, որտեղ մեկ անձի համար ռեստորանային արժեքը սկսվում է 18 000 դրամից:

«Օլդ Աշտարակ» ռեստորանում մեկ անձի համար կարող եք վճարել 17 500 դրամից սկսած:

«Վան Արդի» գինեգործարանի այգիներ: Մեկ անձի համար ռեստորանում արժեքը տատանվում է 18 000 դրամից 25 000 դրամի միջեւ:

«Նազանի». «Արմենիա Վայնի» գինեգործարանի ռեստորանում հստակ մենյուներ չկան, սակայն մենյու սեթեր ընտրելուս հետո՝վստահ եղեք, որ այն կլինի 18-ից 25 հազար դրամի միջեւ՝չափազանց լի եւ առատ:

Հայտնի ռեստորաններից են «Թուֆենկյան» հյուրանոցների ռեստորանները՝ Ավան-Զորագետում, Ծափաթաղում, Երեւանում եւ Դիլիջանում. այստեղ մեկ անձի համար կարելի է աթոռ ամրագրել 18 հազար դրամից սկսած:

Անդրադառնալով ավելի թանկ ռեստորաններին՝ կարելի է առանձնացնել «Պրայմ հոլլ»-ը եւ «Դվին» հյուրանոցը, որտեղ համապատասխանաբար մեկ անձի համար պետք է վճարել 25.000 եւ 50. 000 ՀՀ դրամից սկսած գումար:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոռու եւ Տավուշի մարզերում սույն թվականի մայիսի 25-26-ը տեղի ունեցած աղետի հետեւանքով տուժել են շատ քաղաքացիներ, որոշ մարդկանց բնակարաններ են անգամ վնասվել:

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է այս թեմային:

Հիշեցնենք, որ ՀՀ Լոռու մարզի մարզպետ Արամ Ղազարյանը նախորդ անգամ մեզ հետ զրույցում նշել էր, որ փոխհատուցումների առաջին փուլի փաթեթը համարյա պատրաստ է:

Երեկ տեղեկացանք, որ սույն թվականի հուլիսի 17-ից Ալավերդու համայնքապետարանում, Քարկոփ բնակավայրի մանկապարտեզի շենքում, Տաշիրի, Գյուլագարակի եւ Փամբակի համայնքապետարաններում ստեղծված աշխատանքային խմբերը կիրականացնեն դիմումների ընդունում՝ փոխհատուցման համար:

ԱՌԱՆՑ ԳԱԶ, ՋՈՒՐ ԵՎ ԼՈՒՅՍ

Հայաստանում օրեցօր մարդկանց հիշողությունը ավելի է թարմացվում 90-ականների հին շնչով, հատկապես հին սերունդը «ֆլեշբեքներ» է որսում անցած ու գնացած օրերից:

Բանն այն է, որ մութ եւ ցուրտ 90-ական թվականները, որոնք համարվել են «երջանիկ» տարիներ, հիմա ոչ այնքան են երջանկացնում մարդկանց:

Ամբողջ խնդիրն այն է, որ գազ, ջուր եւ էլեկտրաէներգիա մատակարարող բոլոր ընկերությունները կոպտորեն խախտում եւ ոտնահարում են իրենց իսկ բաժանորդների իրավունքները:

Հանրապետության շատ հասցեներում այսօր, ինչպես նախորդ մնացած շաբաթների պես, լույս չի լինելու:

«ՀԷՑ»-ի փոխանցմամբ՝ կատարվում են պլանային նորոգման աշխատանքներ, սակայն բազմաթիվ քաղաքացիներ էլ նշում են, որ անգամ թեթեւ քամու դեպքում առանց հոսանքի են մնում եւ ժամանակն անցկացնում պարզապես մութ սենյակում:

Հետաքրքրականն այն է, որ այսօրվա իշխանությունը չափազանց հանդուրժող է բոլոր այն ընկերությունների հանդեպ, որոնք հանգիստ կերպով ոտնահարում են իրենց բաժանորդների իրավունքները:

Մինչեւ օրս որեւէ հստակ քայլ չի ձեռնարկվել բոլոր այն ընկերությունների գործունեության հետ կապված, որոնց աշխատանքը բարձիթողի է եւ ամեն օր ավելի է ավելացնում դժգոհ քաղաքացիների քանակը:

Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն էլ ոչ վաղ անցյալում ասում էր, որ հարկատու քաղաքացիները հերոսներ են, բայց, փաստացի, հիմա հարկատու քաղաքացիներին ամեն օր մի նոր տհաճ անակնկալ են մատուցում վերը նշված կերպով՝ հոսանքազրկելով, առանց ջրամատակարարման եւ գազամատակարարման թողնելով:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Մեզանից շատերը դիմում են էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման՝ կարծելով, թե դրանով բարձրացնում են տան էներգադյունավետությունը: Այնինչ էներգախնայողությունը ոչ միշտ է համարժեք էներգադյունավետությանը:

Այսօր կփորձենք հասկանալ այդ երկու հասկացությունների տարբերությունը եւ պարզել՝ ինչպես հասնել էներգադյունավետության:

Էներգախնայողության եւ էներգադյունավետության մասին էներգիայի ծախսի նվազեցումը էներգախնայողությունն է:

Էներգադյունավետությունը էներգիայի ռացիոնալ օգտագործումն է. օգտագործում եք ավելի քիչ էներգիա՝ պահպանելով շենքերի, տան էներգետիկ մակարդակը: Այսինքն՝ ծախսում եք քիչ, սակայն տան ներսի ջերմաստիճանը, օդի խոնավության մակարդակը չեն տուժում դրանից:

Հայաստանում բնակֆոնդը հիմնականում հին է եւ ոչ էներգադյունավետ:

Համաձայն պաշտոնական տվյալների՝ ներկայում Հայաստանի բնակֆոնդում էներգակորուստներն ահռելի չափերի են. էներգիայի օգտագործումը, ըստ մեկ մետր քառակուսու, մոտ 3-5 անգամ բարձր է զարգացած երկրների համեմատ եւ կազմում է տարեկան 280-450 ԿՎտժ/մ2:

Միջազգային փորձառությունը ցույց է տալիս, որ սխալ նախագծված ու կառուցված տանիքին կարող է բաժին ընկնել էներգակորուստների 10-20%-ը, օդափոխությանը՝ 30-35%, պատուհաններին՝ 20-40%-ը, իսկ հիմքին ու պատերին՝ 15-25-ական տոկոսը:

Ինչպե՞ս հասնել առավելագույն էներգադյունավետության

Էներգադյունավետության ռացիոնալ մակարդակ ապահովելու համար, հնարավորության դեպքում.

. Օգտագործեք էներգաարդյունավետ շինանյութ,

. Պատուհանները կենտրոնացրեք հարավային ու արեւելյան պատերին, տեղադրեք ցածր ջերմային հաղորդունակություն ունեցող երկշերտ կամ եռաշերտ պատուհաններ,

. Ջերմամեկուսացրեք պատերը, հատակը, հիմքն ու առաստաղը: Ըստ որում՝ լավագույն արդյունքի հասնելու համար պատերը ջերմամեկուսացրեք դրսից,

. Օդափոխության համակարգ ներդրեք,

. Մեկ միավորի հաշվարկով նվազագույն ջերմության կորուստ ունենալու համար նախապատվություն տվեք խորանարդաձեւ կամ գնդաձեւ մակերեսներին,

. Օգտագործեք ջեռուցման լավագույն տարբերակներն ու համակարգերը, այդ թվում՝ տեղադրեք արեւային պանելներ:

Ինչպե՞ս տունը դարձնել էներգադյունավետ՝ առանց խնայողություններն օգտագործելու.

Էներգադյունավետ ֆինանսավորման հարցում հուսալի գործընկեր գտնելու համար երկար ժամանակ ու նյարդեր պետք չեն: «Կոնվերս» բանկը գիտի, թե ինչպես օգնի յուրաքանչյուրին՝ գտնելու լավագույն լուծումը: Բանկն առաջարկում է էներգադյունավետ շինարարության եւ նորոգման տարբեր գործիքներ, այդ թվում՝ ֆինանսավորում է իրականացնում տարբեր ծրագրերի շրջանակում:

Բանկը հիփոթեքային, էներգադյունավետ ֆինանսավորում է իրականացնում՝ երկրորդ տարվանից ստանձնելով սեփական միջոցներով գույքի ապահովագրության պարտականությունը, ինչով զգալիորեն նվազեցնում է հաճախորդների կողմից փաստացի վճարումները:

Իսկ ծրագրերից մեկով առաջարկվում է էներգադյունավետ վարկավորում, արեւային ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ սկսած երեք տոկոս տարեկան փաստացի տոկոսադրույքից:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 010-511-211:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՏՈՒԳԱՆՔԻ ՉԱՓԸ ԿԱԶՄԵԼ Է 36.750 ՄԼՆ ԴՐԱՄ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի հունիս ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով վարձու աշխատողի չձեւակերպման դեպքեր արձանագրվել են ընդհանուր առմամբ 39 հարկ վճարողի մոտ, իսկ տուգանքի չափը կազմել է 36.750 մլն դրամ:

Երեք եւ ավելի վարձու աշխատողների չձեւակերպման 13 դեպքով 13 հարկ վճարող տուգանվել է 27.500 մլն դրամով: Մասնավորապես, դեպքերն արձանագրվել են հետեւյալ ոլորտներում.

- դեղերի եւ բժշկական պարագաների առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 3 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 750 հազար դրամ տուգանք,

- կոսմետիկայի, արդուզարդի եւ օծանելիքի խանութում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 3 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 750 հազար դրամ տուգանք,

- կրթության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 3 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 750 հազար դրամ տուգանք,

- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտուր ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 6 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.5 մլն դրամ տուգանք,

- շինարարության (բացառությամբ շենքերի կառուցապատման եւ ճանապարհաշինարարության) ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 8 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 2 մլն դրամ տուգանք,

- այլ ոլորտներում 4 հարկ վճարողի մոտ 4 դեպքով բացահայտվել է 61 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 15.250 մլն դրամ տուգանք:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է Ռաֆիկ Մնացականյանի՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Շատվան գյուղի վարչական տարածքում գյուղատնտեսական /ոռոգում 33,6 հա/ նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 20,0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հուլիսի 24-ին՝

(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

ժամը 16:00-ին. հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՅՈՒՆԵՍԿՕ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթության հարցերով տեղակալ Ստեֆանիա Ջիաննինիի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանն ու Արաքսիա Սվաջյանը:

ԿԳՄՍ նախարարը կարեւորել է բոլորովին վերջերս՝ հունիսի 16-22-ը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելության փորձագետների այցը Հայաստան: 4 փորձագետներից կազմված առաքելությունը հունիսին երկու սեմինար է անցկացրել Հայաստանում՝ «Տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում մասնագիտական կրթության եւ ուսուցման կառավարման եւ ֆինանսավորման վերաբերյալ տեխնիկական ուղեցույցների տրամադրում» եւ «Հմտությունների պրոֆիլավորման եւ աշխատանք փնտրելու տեխնիկական գործիքի ներդրում» թեմաներով, որը նախատեսված է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների եւ աշխատանք փնտրող քաղաքացիների համար:

Սեմինարներն անցկացվել են ՄԿՈՒ ոլորտում քաղաքականություն մշակող եւ իրականացնող, ինչպես նաեւ շահագրգիռ կողմ հանդիսացող ներկայացուցիչների մասնակցությամբ: Ջուգահեռ կայացել են նաեւ ՄԿՈՒ ոլորտի երկկողմ ձեւաչափով նախատեսված հանդիպումներ:

«Մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտը մեր ամենակարեւոր ուղղություններից է: Արդեն ստացել ենք փորձագետների հաշվետվությունն ու առաջարկությունները, որոնք իսկապես արժեքավոր են մեզ համար»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու կարեւորել այն աջակցությունը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետները տրամադրում են հմտությունների պրոֆիլավորման ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում նախարարը ներկայացրել է Կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման ռազմավարության կարեւոր թիրախները՝ նշելով, որ ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտները պետք է աշխատաշուկայում մրցունակ լինեն եւ կարողանան մասնագիտական զբաղվածություն ունենալ: Այս թիրախի ապահովման նպատակով իրականացվող շարունակական աշխատանքներից նախարարը կարեւորել է հատկապես օրենսդրական բարելավումները միկրո որակավորումների եւ կրթության ներառականության ուղղությամբ աշխատանքները: ԿԳՄՍ նախարարը կարեւորել է նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների կրթության ապահովման հարցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի տրամադրած աջակցությունը: Մասնավորապես, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնն իրականացնում է «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների ընդգրկումը կրթական գործընթացում նրանց հոգեսոցիալական տոկունության բարձրացման միջոցով» ծրագիրը: ՀՄԿ-ի կողմից շուրջ 632 հոգեբանների համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթացների առաջին փուլը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթության հարցերով տեղակալ Ստեֆանիա Ջիաննինին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ կարեւորել Հայաստանի կրթական համակարգում իրականացվող մեծածավալ բարեփոխումներն ինչպես մասնագիտական կրթության եւ ուսուցման, այնպես էլ բարձրագույն կրթության ոլորտներում: Ստեֆանիա Ջիաննինին արդյունավետ է գնահատել Հայաստանի ջանքերը՝ ուղղված մարտահրավերային իրավիճակների հաղթահարմանն ու այդ համատեքստում կրթության իրավունքի իրացման գերակայությանը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթության հարցերով տեղակալը պատրաստակամություն է հայտնել շարունակելու համագործակցությունը նշված բոլոր ուղղություններով:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՕԽ ՔԱՀԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԱՎԱԶՔ

Հայաստանի օլիմպիական հավաքականի անդամ, հրաձիգ Էլմիրա Կարապետյանը մասնակցել է Օլիմպիական խաղերի կրակի փոխանցումավազքին:

Էլմիրա Կարապետյանը Փարիզ-2024-ի ջահով վազել է Ֆրանսիայի հյուսիսում գտնվող Օ դը Սեն երկրամասի Վիլեր Կոտրեն համայնքում:

Հայաստանը Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերին կունենա 15 մասնակից՝ հրաձիգ Էլմիրա Կարապետյանը, մարմնամարզիկներ Արթուր Դավթյանը (հենացատկ), Վահագն Դավթյանը (օղակներ), ըմբիշներ Սլավիկ Գալստյանը (հունահռոմեական ոճ, 67 կգ), Մալխաս Ամոյանը (հունահռոմեական ոճ, 77 կգ), Արթուր Ալեքսանյանը (հունահռոմեական ոճ, 97 կգ), Արսեն Հարությունյանը (ազատ ոճ, 57 կգ), Վազգեն Թեւանյանը (ազատ ոճ, 65 կգ), ծանրորդներ Անդրանիկ Կարապետյանը (89 կգ), Գարիկ Կարապետյանը (102 կգ), Վարազդատ Լալայանը (+102 կգ), բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը (+92 կգ), լողորդներ Արթուր Բարսեղյանը եւ Վարսենիկ Մանուչարյանը, աթլետ Երվանդ Մկրտչյանը:

ՓԱՐԻԶ–2024–Ի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՇԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Հայաստանի դրոշակակիրները Փարիզի Օլիմպիական խաղերի բացման պաշտոնական արարողության ժամանակ կլինեն բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը եւ լողորդ Վարսենիկ Մանուչարյանը:

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Գագիկ Ծառուկյանը հանդիպել է օլիմպիական հավաքականին, որը մասնակցելու է Փարիզ-2024-ին:

«Դժվարին ճանապարհ եք անցել եւ եկել եք, հասել Օլիմպիական խաղերին: Ինձ մնում է ձեզ հաջողություն մաղթել: Դուք Օլիմպիական խաղերում Հայաստանի դեսպաններն եք: Եկել է հաղթանակներով մեր ազգին ուրախացնելու պահը: Հաղթանակներով պետք է ձեր ձեռագիրը թողնեք պատմության մեջ»,-ասել է Ծառուկյանը:

Գործկոմի ընդլայնված նիստում որոշվեց, որ Հայաստանի օլիմպիական թիմի դրոշակակիրները կլինեն Դավիթ Չալոյանը եւ Վարսենիկ Մանուչարյանը:

«ՆՈՐ ԳՈՒՅՆԵՐ»

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Արմավիրի մարզի Լուկաշին գյուղում բացվել է «Նոր գույներ» խորագրով երիտասարդական մշակութային զարգացման կենտրոն: Կենտրոնը ռուս-հայկական բարեկամության ամրապնդման եւս մեկ քայլ է: Այն բացվել է Հաղորդակցության զարգացման ազգային գիտահետազոտական ինստիտուտի (НИИРК) աջակցությամբ եւ Հաղորդակցությունների զարգացման միջազգային ինստիտուտ (МИР) հիմնադրամի մարդասիրական ծրագրերի իրականացման շրջանակներում:

2023 թվականի դեկտեմբերին Գյումրիում (Հայաստան) անցկացվել էր երիտասարդ առաջնորդների համաժողով, որի հաղթողն էր Արմավիրի թիմը, որն առաջարկել էր նման կենտրոն ստեղծելու գաղափար:

Եվ ահա, գաղափարն արդեն իրականություն է:

Կենտրոնի բացման արարողությանը մասնակցել են МИР հիմնադրամի տնօրեն Գագիկ Ալոյանը, պետական իշխանության ներկայացուցիչներ, ինչպես նաեւ մարզի բնակիչներ:

Ողջույնի խոսքում Գագիկ Ալոյանը շնորհակալություն է հայտնել НИИРК-ին՝ Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ մշակութային եւ կրթական կապերի ամրապնդմանն ուղղված հիմնադրամի մարդասիրական ծրագրերին աջակցելու համար եւ հույս է հայտնել հետագա արդյունավետ համագործակցության համար:

Արմավիրի քաղաքապետ Վարշամ Սարգսյանը շնորհավորել է բնակավայրի բնակիչներին: Լուկաշին համայնքի ղեկավար Գեւորգ Ջեյնալյանը նույնպես նշել է նոր կենտրոնի կարեւորությունը տեղի բնակչության համար: «Վստահ եմ, որ «Նոր գույներ» կենտրոնը կդառնա մատաղ սերնդի մշակութային փոխանակման եւ կրթական գործունեության առանցքային օղակը՝ նպաստելով Ռուսաստանի եւ Հայաստանի ժողովուրդների փոխըմբռնմանը, հարգանքին եւ բարեկամությանը»,-նշել է նա իր խոսքում:

Կենտրոնը նախատեսում է կազմակերպել միջոցառումներ, որոնք կդառնան վառ իրադարձություններ ոչ միայն Լուկաշին գյուղի, այլեւ ողջ տարածաշրջանի մշակութային կյանքում: Երեխաներն այստեղ կզբաղվեն արվեստով, կսովորեն պատմություն եւ գրականություն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու ռուսաց լեզվի եւ մշակույթի ուսումնասիրությանը:

● *Հուլիսի 19-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Փարիզյան դատավճիռ» դրաման: Տոմսերի արժեքը՝ 2000-4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու դեպքում որքան տուգանք է սահմանված:

Հրաչ Միքայելյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հ. Միքայելյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածի համաձայն՝ հետագա արտահանման պարտավորությամբ ՀՀ ներմուծված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելը կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները եւ տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում ՀՀ չներմուծելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:

Նույն խախտումը, որը զուգորդվել է ապրանքների կամ տրանսպորտային միջոցների օտարմամբ, առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սահմանված ժամկետում մաքսային մարմիններին ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ մաքսային հայտարարագիր չներկայացնելը, ինչպես նաեւ մաքսային հսկողություն իրականացնելու համար ապրանքների եւ տրանսպորտային միջոցների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելը, անկախ գրավոր հայտարարագիր ներկայացնելուց, առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50,000 դրամի չափով:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչպես կարելի է ձեռք բերել կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարան կամ ոչ բնակելի տարածք:

Տիրուհի Հարությունյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերում բնակարան կամ ոչ բնակելի տարածք ձեռք բերելիս սեփականության իրավունքով ձեռք է բերվում հողամասի համապատասխան բաժնային մասը: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդված):

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքը անձի՝ ուրիշի սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունում բնակվելու իրավունքն է: Հողամասի մասը կարող է օտարվել առանց նախօրոք առանձնացվելու: Դրա համար օտարման պայմանագրին, որպես դրա անբաժանելի մաս, պետք է կցված լինի հողամասի օտարող մասի հատակագիծը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Կիլիան, դու մեծ ջանքեր ես գործադրել այստեղ հայտնվելու համար: Այնպիսի ջանքեր, որոնց մասին երկրպագուներն անգամ չեն կարող պատկերացնել: Դու դա արեցիր, քանի որ ցանկանում էիր իրականացնել երազանքդ»: Այս խոսքերով ֆուտբոլիստին է դիմել «Ռեալ Մադրիդ» ակումբի նախագահ Ֆլորենտինո Պերեսը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11+ 16 +27 + 30
Կոտայքի լեռներ	+ 10 + 13 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7 + 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14 + 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33

Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18 + 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 19 + 22 + 32 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*